

06.04.2013

8965

89
ՀՀ-ՀՀ

15 ՀՅԻ 2013

19 NOV 2010

Հայկական ՍՍՌ Մանկ. Ինստիտուտի Հեռակա Բաժին

ԼԵԶՎԱԳՐԱԿԱՆ ՑԱԿՈՒԼՏԵՏ

I կուրս

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻՆՔ ԱՆՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԾՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

1940—41 ՊԽՍ. ՏԱՐԻ

Անտիկ գրականության ուսումնասիրությունը պետք է
սկսել զբար Յերածականից:

Ուսանձնապես պետք է կանգ առնել ներածականի վրա,
որովհետև նրա մեջ շարագրված են այն դլխավոր ու հիմնական
մկղունքները, որոնք պարզաբանում են անտիկ գրականության
մի շարք հանգուցային խնդիրները: Այդ սկզբունքները մեզ տա-
լիս են մարգսիզմ-լինինիզմի ուսուցիչները:

Այդ սկզբունքների հիման վրա ներածականում ցույց են
արված այն նախադրյաները, որոնցից ծնունդ են առել հու-
նական արվեստն ու միապարությունը, մեկնաբանված է դիցա-
րանությունը, որը հանդիսանում է հունական ժողովրդի ստեղ-
ծագործությունը և բնույթյան հայրածառումն այդ ժողովրդի
երեսակայության միջոցով, նշված է հունական վիպերգություն-
ի հունական հասարակական անզարգացած միջավայրի անխօնիի
կապը, ինչպես և այն պատճառները, որոնց հիման վրա չասու-
նացած հասարակական միջավայրը մարդկության մանկության
շրջանում ստեղծեց այնպիսի վիպերգություն, որը շարունակում

1891
41



և մեզ պատճառել գեղարվեստական հաճույք և պահպանել և որոշ չափով նորմայի ու անհասանելի տիպարի նշանակության (Մարքս):

Մարքսը «Քաղաքատնտեսության քննադատության» ներածականի մեջ (էջ 57) գրում է, որ հունական դիցաբանությունը հանդիսացել է հունական արվեստի հողը, այդ արվեստը սնուցանող մայրական գիրկը: Մարքսի այս գրույթը հաստատում է հունական ողջ արվեստը, գրականությունը բազմաթիվ օրինակներով: Այս օրինակները պետք է դիտել գրքի ուսումնասիրման ժամանակ և առանձնացնել յուրաքանչյուր կոնկրետ մոմենտ:

Գրական ստեղծագործությունները սերտորեն կապակցված են իրենց ժամանակաշրջանի հասարակական միջավայրի հետ և արտահայտում են տվյալ ժամանակաշրջանի հասարակական տըրամագրությունները, հասարակական խավերի ըմբռնությունը և տենչերը, քաղաքական իդեալները, այդ խավերի պայքարը: Գրական ժանրերի (քնարերգություն, գրամա և այլն) ուսումնասիրությունը պետք է կատարել այնպես, որ յուրաքանչյուր գեղարվեստական երկի մեջ հնարավոր լինի վեր հանել այդ արքամագրությունները, պայքարը, պարզել թե հասարակական մը խավի ձգությունների ու աշխարհայնողության արտահայտիչն է հեղինակը, ցույց տալ թե ի՞նչպես գրական ժանրերն անտիկ աշխարհում ծառայել են որպես գենք քաղաքական հակամարտութերի ձեռքին նրանց տիրապետությունն ամբապնդելու համար և որպես հայելի անդրադարձել ժամանակաշրջանի աշխարհայեցողությունը:

Հոսոմեական գրականության ուսումնասիրության համար պետք է հատուկ ուշադրություն դարձնել հոսոմեական գրականության նշանակության վրա որպես հունական կուլտուրայի հաղորդիչ՝ եվրոպական կուլտուրայի նոր ժամանակաշրջաններին: Անհրաժեշտ է հանգամանորեն մշակել այն տվյալները, որոնք վերաբերում են Հոսոմի ստրկատիրական ֆորմացիայի քնութագրությունը, հունական գրական ձերքի փոխանցմանը

հոսոմեական պոեզիայի մեջ, բանաստեղծների վերաբերմունքին իշխող դասակարգերի նկատմամբ: Պետք է լավ ծանոթանալ նույնպես հոսոմեական թատրոնին և գրամային, գրական ուղղություններին: Առանձնապես անհրաժեշտ է կանգ առնել կոռումեական գրականության ոսկեղարի վրա և այնունետե մշակել կայսրության ժամանակաշրջանի գրականության վերաբերյալ գետեղված նյութերը:

Չուզանեն այն մեջբերումների, որոնք քաղված են մարքսիզմ-ինինիզմի կլասիկների ստեղծագործություններից՝ պետք է կարգալ էնդելսի «Բնտանիքի», մասնավոր սեփականության և պետության ծագումը, որի մեջ բացառիկ լրիվությամբ ու հստակությամբ պարզաբանված են ողջ անտիկ աշխարհը և գըրական բազմաթիվ խնդիրները: Ստրուկների բրավական ու ալինական վիճակի լավագույն պարզաբանումը, բացի էնդելսի այս գրքից, կարելի է տեսնել ընկեր Լենինի «Պետության մասին» աշխատության մեջ, որը հայերեն հրատարակվել է թե առանձին և թե իբրև հավելված լենինի «Պետություն և հեղափոխություն» գրքի:

Որպես պարտադիր ընթերցանության նյութ հանձնարարում եմ հետեւյալը:

Հոմերոս.—«Իլիական», «Ոդիսական»: (Թարգմ. Դադիկյանի կամ Ֆ. Շմիդթի կազմածը, որը թարգմանել է Փ. Վարդանյանը, տես զբքի էջ 440-ի ցուցակը):

Հեսիոդոս.—«Աշխատանք և օրեր» (ռուսերեն՝ Գեսիօդ—«Труды и дни»), հայերեն թարգմ. չկա.

Սոֆիլիս.—Պրոմեթեուս (Էсхիլ.—«Прикованный Прометей»).

» «Օրեստեա», («Орестея»), ռուսերեն.

Սոփոկլես.—«Եգիպտոս արքա» (Софокл.—«Эдип царь»).

» «Անտիգոն» («Антигона»).

Նվրիպիդս—«Մեդեա».

Արիստոփանես.—«Զիբավորներ», «Ամպեր» (տես ռուսերեն ժողովածու՝ «Комедии», նույն հեղինակի):

Վերգիլիոս.—«Էնեական» (Վերգiliй—«Энеида»).


08.04

«Առակե Եզրապոսի», թարգմ. Մ. Բժշկյանի (Եզրապոսի մաս-
սին կարդալ Ս. Քամալյանի կազմած «Եզրապոսի
կյանքը»).

Որպես օժանդակ գրականություն հանձնարարելի է՝
Հ. Փ. Դերատանի. — «Хрестоматия по античной литерату-
туре», т. I, Греция.

» «Хрестоматия по античной литературе»,
том II, Рим.

Ազգակի Գեղարվան



Ղ. 2363, Մանկ. թանա. տպ., ուսուվեր 432, տիբուն 750, 1910 թ.



8965